ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտ. թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԱՍՆԱՅ ԾՌԵՐ» ԴԻՑԱՎԷՊԻ ՄԻ ԴՐՈՒԱԳԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՓՈՐՁ*

Տակաւին Ի. դարում տարբեր հետազօտողներ նկատել են, որ «Սասունցի Դաւիթ» կամ «Սասնայ Ծռեր» դիցավէպի որոշ հերոսներ շատ ուղղակի աղերսներ ունեն աստղալից երկնքի՝ համաստեղութիւնների ու մոլորակների հետ[1]։ Անշուշտ, նկատուած եւ ի յայտ բերուած առընչութիւնները հիմնականում ճիշտ են։ Հայկական դիցավէպի բազմաթիւ գործող անձինք յստակ զուգահեռներ ունեն աստղալից երկնքում։ Սակայն առանձին զուգահեռների բացայայտումը բաւարար չէ՝ հասկանալու համար այն ընդհանուր համընդգրկուն առընչութիւնը, որ կայ Հայոց այս դիցավէպի եւ աստղալից երկնքին վերաբերող հնագոյն պատկերացումների միջեւ։

Ժամանակին բոլորովին այլ առիթով նկատուել էր, որ Սասնայ տան երկրորդ ճիւղի հերոս Մեծ (կամ Ջոջ, Առիւծ, Առիւծաձեւ) Մհերը յստակ լուսնային կերպար է, եւ նրա կեանքն էլ 7-ական տարիների տրոհուած փուլերով ընդամենը արտայայտութիւնն է լուսնային ամսի[2]։ Նոյն կարգի առընչութիւններ նկատւում են նաեւ Սասնայ տան այլ հերոսների անունների, կեանքի ժամանակահատուածների եւ էական իրադարձութիւնների պարագայում։ Այսպէս օրինակ՝ դիցավէպի որոշ պատումներում նորածին Դաւիթը մօր մահից յետոյ քաղցած է մնում 3 օր, իսկ Դաւիթի հայրը՝ Մհերը, մահանում է որդու ծնուելուց 3 տարի անց՝ լրիւ որբ թողնելով մանուկ Դաւիթին[3] (այս երկու դէպքում առկայ 3 թիւը

---

* *Տպագրւում է հեղինակի անժամանակ վախճանից յետոյ։*

[1] *Տե՛ս* Յ. Օրբէլի, *Առաջաբան, «Սասունցի Դաւիթ», Երեւան, 1939, էջ* XXVI–XXVIII։

[2] *Տե՛ս* Գր. Բրուտեան, *Օրացոյց Հայոց, Ս. էջմիածին, 1997, էջ 460–461։*

[3] *Տե՛ս «Սասունցի Դաւիթ», նոր պատումներ, հաւաք. եւ հրատ. պատր.՝* Գր. եւ Վ. Գրիգորեաններ, *Երեւան, 1977, էջ 258–260։*

համապատասխանում է լուսնային ամսի այն 3 օրերին, որոնց ընթացքում նոր «ծնուած» Լուսինը դեռ չի երեւում կամ դէպի վերջ՝ դէպի «մահ» գնացող Լուսինն արդէն չի երեւում)։ Դաւիթը 7 տարեկանում սկսում է Սասունում իր «գործունէութիւնը»։ Իսկ 15 տարեկանում արդէն սխրանքներ է գործում. պատուհասում է հարկահանութեան, աւարի եւ աւերի եկած Կուզ (Խուդ) Բադինին, սպանում իր նախրից եզ գողացած դեւերին ու գրաւում նրանց գանձարանը[4]։ Նոյնպիսի 7-ական տարիների տրոհուածութիւն առկայ է նաեւ դիցավէպի այլ գործող անձանց «կենսագրութեան» մէջ։ Այստեղ ուշագրաւ է, որ թէպէտ Դաւիթն ակնյայտօրէն արեգակնային հերոս է՝ դասական արեգակնային հերոսին բնորոշ յատկանիշներով (դեւեր ու վիշապներ սպանել, գանձեր ու աղջիկներ ազատել, քաղաքը փրկել, ի վերջոյ՝ ամուսնանալ եւ սերունդ թողնել), այդուհանդերձ, նրա կեանքը տրոհուած է ժամանակային այնպիսի հատուածների, որոնք յատուկ են Լուսնի փուլերին (7-ական տարիներ, 3-ական օրեր)։

Ի դէպ, իբրեւ ընդմիջարկութիւն, նկատենք մի կարեւոր իրողութիւն. միեւնոյն հերոսի՝ միաժամանակ թէ՛ լուսնային, թէ՛ արեգակնային կերպարների բնութագրեր ունենալը կարելի է դիտել իբրեւ կողմնակի վկայութիւն առ այն, որ Հայոց նախնական պատկերացումների համակարգում սկզբունքային տարբերութիւն չի եղել Արեւի ու Լուսնի միջեւ։ Սա իր հերթին պիտի նշանակի այս երկու մեծ լուսատուների դիցաբանական-կերպարային նոյնացումը նախնական շրջանում (դիտելով Լուսինն իբրեւ անդրաշխարհի արեւ, իբրեւ արեւ, որ իջել է անդրաշխարհ)։

Այս կարգի առընչութիւնները քիչ չեն մեր դիցավէպում, եւ դրանց որոնումն ու մեկնաբանումը կարելի է երկար շարունակել։ Սակայն աւելի էական են համակարգային ընդհանրութիւնների բացայայտումն ու մեկնաբանութիւնը։ Սկսենք ամենաակնյայտից։

Նախքան բուն համեմատութիւնն սկսելը նկատենք, որ ճիշտ այնպէս, ինչպէս դիցավէպում, Սասնայ տունը (եւ այդ տան անդամները) էապէս տարբերակուած են մնացեալ ամբողջ աշխարհից, նոյն կերպ աստղալից երկնքում առանձնացուած են դրա միջին գօտին կազմող Կենդանաշրջանի աստեղատները։ Աւանդաբար հնուց աստղալից երկինքը բաժանուել է երեք մասի՝ Կենդանաշրջան (որ խաւարածրի երկայնքով դասաւորուած համաստեղութիւնների գօտին է), Կենդանաշրջանից հիւսիս գտնուող

[4] Տե՛ս անդ, էջ 277–281։

մասը եւ դրանից հարաւ գտնուող մասը։ Այս երեք մասերն առանձին-առանձին տրոհուած են եղել 12-ական համաստեղութիւնների (ամբողջ երկինքը՝ 3×12=36 համաստեղութիւն)[5]։ Երկնքի կենտրոնական հարթութիւն է դիտուել խաւարածրի հարթութիւնը, եւ բոլոր լուսատուների դիրքերը որոշուել-տրուել են խաւարածրի նկատմամբ[6]։ Կենդանաշրջանը, ինչպէս նշուեց, տրոհուած է եղել 12 մասի՝ 12 կենդանակերպի[7]։

Ահա նոյն կերպ «Սասնայ ծռերի» մէջ մարդկանց աշխարհը եւս տրոհուած է երեք մասի։ Կենտրոնում Սասունն է եւ Սասնայ տունը, դրանից հիւսիս (Բիթլիս, Կապուտկող, Մանազկերտ եւն)՝ Հայոց աշխարհը, որտեղ հերոսները գնում են, գալիս, խնամիութիւն անում, իսկ Սասունից հարաւ Մըսրն է եւ Բաղդադը, որտեղ թշնամին է՝ հակառակորդը (տե՛ս աղ. 1)։

Աղիւսակ 1.

Աշխարհի բաժանումը մասերի	Երկնքի բաժանումը մասերի
Հայոց աշխարհ (Բիթլիս, Մանազկերտ, Կապուտկող եւն)	*Հիւսիսային աստղեր*
Սասնայ տուն	*Կենդանաշրջան*
Մըսրը, Բաղդադ (թշնամական տարածք)	*Հարաւային աստղեր*

Ըստ այսմ՝ բնական է, որ դիցավէպի գործող անձանց համեմատութիւնը համաստեղութիւնների հետ արուի՝ հիմք ընդունելով նախ եւ առաջ խաւարածրի երկայնքով դասաւորուած Կենդանաշրջանի աստեղատները։ Արդ, ի նկատ ունենալով սա՝ դառնանք մեր բուն քննութեանը։

---

[5] *Երկնքի այսպիսի համակարգուած բաժանում մեզ աւանդուած է հին Միջագետքից (Շումեր), հին Եգիպտոսից եւ միջնադարեան Հայաստանից։ Ունենք Անանիա Շիրակունու միջոցով մեզ հասած վկայութիւն այն մասին, որ հին Հայոց պատկերացումների համաձայն՝ աստեղատները դասդասուած են եղել երեք խմբի. Կենդանաշրջանի 12 աստեղատներ, հիւսիսային 12 աստեղատներ եւ հարաւային 12 աստեղատներ. տե՛ս* Անանիա Շիրակացի, *Տիեզերագիտութիւն եւ տոմար, գլ. ԾԶ., Երեւան, 1940, էջ 83. նաեւ՝* Գր. Բրուտեան, *Օրացոյց Հայոց, էջ 197–198, 488։*

[6] *Օրինակ՝ խաւարածրի նկատմամբ են տրուած աստղերի դիրքերը Պտղոմէոսի «Ալմագեստ»-ում, որ հին աշխարհից մեզ հասած ամենահին ամբողջական աստղացուցակն է. յայտնի է նաեւ, որ Պտղոմէոսն էլ իր աստղացուցակը վերցրել է Հիպարքոսի (Ն. Ք. Բ. դար) աստղացուցակից։*

[7] *Թէ ինչու է յատկապէս 12 մասի տրոհուած Կենդանաշրջանը՝ մանրամասն տե՛ս* Գր. Բրուտեան, *Հայկական տոմարագիտութիւն, Երեւան, 2016, էջ 126–131։*

Դիցավէպի առաջին երկու ճիւղերին հպանցիկ ծանօթութիւնն արդէն թոյլ է տալիս նկատել, որ Սասնայ տան հիմնադիր Սանասարն ու նրա երեք որդիները լրիւ զուգահեռներ ունեն Կենդանաշրջանի աստեղատների մէջ։ Նայենք այս ընտանիքի անդամներին հերթով։

Սանասարը, ինչպէս դիցավէպի մեզ յայտնի բոլոր պատումներում վկայուած է, երկուորեակ *եղբայրներից աւագն է, առաւել ուժեղը, խելօքը։ Սանասարն ու Բաղդասարը (որոշ պատումներում՝ այլ անունով) դիցավէպում հանդէս են գալիս «դասական» երկուորեակներին յատուկ բնութագրերով։ Նրանցից մէկը (աւագը՝ Սանասարը) միշտ էապէս ուժեղ է կրտսեր եղբօրից, սխրագործութիւնների հիմնական մասն անում է հէնց Սանասարը եւ, ի վերջոյ, ինչպէս «դասական» երկուորեակների պարագայում, եղբայրներից հէնց Սանասարն է, որ «անմահանում» է որդեծնութեամբ, մինչդեռ կրտսեր եղբայրը՝ Բաղդասարը, մնում է անժառանգ (անշուշտ, կան նաեւ դիցավէպի տարբեր պատումներ, ուր այս եղբայրը եւս ժառանգ է ունենում)։*

Սանասար—Բաղդասար զոյգի բազմաթիւ զուգահեռներից յիշենք յունական Կաստորին եւ Պոլիդեւքէսին, որ երկուորեակներ են, եւ նրանցից մէկը՝ Պոլիդեւքէսը, անմահ է, իսկ միւսը՝ Կաստորը՝ մահկանացու[8]*։ Այսինքն՝ երկուորեակների տարբերութիւնը ոչ միայն նրանց մարմնական ուժի եւ խելքի, այլ նաեւ կեանքի յարատեւութեան-անմահութեան ունակութեան մէջ է. եւ սրա մի արտայայտութիւնն է սերնդագործելու ունակութիւնը՝ իբրեւ անմահութեան ձեւ (անմահութիւն սերունդների մէջ)։*

Ահա, Կենդանաշրջանի մէջ Սանասարին (եւ նրա եղբօրը) զուգահեռ՝ ունենք երկուորեակներ *աստեղատունը։ Սասնայ տան սկզբնաւորող Ծովինարի երկուորեակ որդիների նոյնացումը երկուորեակներ կենդանակերպի հետ հիմք է տալիս Սասնայ տան միւս անդամներին որոնել երկնային երկուորեակների մերձակայքում։ Եւ իրօք, Սանասարի 3 որդիների երկնային կերպարներն առկայ են Կենդանաշրջանի մէջ՝ ի դէմս* Ցուլ, Խեցգետին *եւ* Առիւծ *կենդանակերպերի։ Դիտարկենք սրանք առանձին-առանձին։*

Դիցավէպն աւանդում է՝ Սանասարի աւագ որդին է Վերգօն, *որ յայտնի է նաեւ* Ցոան Վերգօ *անունով։ Միջնեկն* Օհանն *է (կամ Յովանը), որ*

[8] *Այս մասին տե՛ս օր.՝* «Мифы народов мира», «Советская Энциклопедия», т. 1, Москва, 1991, *էջ 382—383։*

առաւել յայտնի է Ձէնով Օհան *անուամբ։ Եւ կրտսերը* Մհերն *է, որին գիտենք* Մեծ *(*Ջոջ*)* Մհեր, Առիւծ Մհեր *կամ* Առիւծաձեւ Մհեր *անուններով։*

Այս երեք կերպարներից ամենադիւրինը Առիւծ *(կամ* Առիւծաձեւ*) Մհերի նոյնացումն է* Առիւծ *կենդանակերպի հետ։ Եւ այս պարագայում ակնյայտ է համաստեղութեան անուան եւ Մհերի մակդիրի նոյնականութիւնը։ Անունների ընդհանրութեան եւս մի արտայայտութիւն* Մհեր *անունն է, որ իբրեւ Միհր աստծու անուան տարբերակ, դարձեալ յուշում է, որ պէտք է լինի ընդհանրութիւն Մհերի եւ Առիւծի միջեւ (Մհեր—Արեւ—Առիւծ*[9]*)։ Իսկ որոշ այլ տուեալների մասին խօսք կլինի ստորեւ՝ ըստ կարգի։*

Փոքր-ինչ ակնյայտ չէ Ձէնով Օհանի նոյնացումը։ Սանասարի այս որդին դիցավէպում հանդէս է գալիս հիմնականում իր աներեւակայելի հզօր ձայնով։ Նրա ձայնն այնքան զօրաւոր է, որ հնչեցնելիս «չպատռուելու» համար գոռալուց առաջ նա ինքն իրեն փաթաթում է (7) գոմէշի *կաշիներով, որոշ դէպքերում էլ գոմէշի կաշիների վրայից Օհանը փաթաթւում է նաեւ* գութանի *շղթաներով*[10]*։ Իր մնացեալ յատկանիշներով Օհանն էապէս չի տարբերւում Սասնայ տան միւս հսկաներից։ Ուրեմն՝ Օհանին երկնային կերպարների հետ նոյնացնելու համար հարկ է հիմք ընդունել հէնց նրա հիմնական տարբերակիչ յատկանիշը, որ է՝ գոռալուց առաջ* գոմէշի *կաշիներով (եւ* գութանի *շղթաներով) փաթաթուելը։ Այս երկու գործողութիւնները կապւում են արտավարութեանը սերտօրէն առընչւող* գոմէշ *կենդանու եւ* գութան *առարկայի հետ։ Գիտենք, որ գութանը (կամ դրա նախնական տարբերակ արօրը) հացի մշակութեան առաջին փուլի՝ վարի հիմնական գործիքն է, եւ այդ գործիքը հնարաւոր է գործի դնել միայն հզօր քարշող անասունի միջոցով։ Իբրեւ հզօրագոյն քարշող կենդանիներ՝ Հայաստանում հնուց անտի օգտագործուել են* եզներն *ու* գոմէշները*։ Երկու դէպքում էլ իբրեւ քարշող ուժ կիրառուել են կենդանիների արուները։ Եւ գիտենք նաեւ, որ այս կենդանիների արուներն ընդհանուր անունով կոչւում են* ցուլ*։ Այսինքն, (*գութան*) քարշող կենդանին միշտ էլ* ցուլ *է*[11]*։ Այսպիսով՝ տեսնում ենք, որ Օհանի համար բնութագրական երկու առարկաններն էլ, ի վերջոյ, կապուած են* ցուլի *հետ։ Ըստ այսմ՝ բոլոր հիմքերն ունենք Սանասարի որդի* Ձէնով Օհանին *նոյնացնելու* Ցուլ

---

[9] *Առիւծ—արեւ զուգհեռութեան մասին տե՛ս օր.՝* «Мифы народов мира», «Советская Энциклопедия», т. 2, Москва, 1992, *էջ 41—43։*

[10] *Տե՛ս օր.՝ «Սասնայ ծռեր», աշխատ.՝ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1977, էջ 130։*

[11] *Ընդհանրապէս, իբրեւ քարշող անասուն, կիրառւում է կոտած ցուլը, որ առաւել յայտնի է «եզ» անունով։*

կենդանակերպի հետ։ Նկատենք, որ ներկայ նոյնացման օգտին է նաեւ այն, որ ընտանի կենդանիների մէջ ամենահզօր ձայն ունեցողը հէնց ցուլն է, որով դարձեալ ընդգծւում է Զէնով Օհան-Յուլ զուգահեռութիւնը։

Մնաց Սանասարի որդիներից Վերգոյի նոյնացումը։ Այս կերպարի մասին քիչ բան է վկայուած դիցավէպում։ Սակայն այս դէպքում եւս նոյնացման համար անհրաժեշտ տեղեկոյթի հիմնական աղբիւրը հէնց գործող անձի վրադիր անունն է։ Վերգօն յայտնի է հիմնականում Ցռան *մակդիրով։ Հէնց դիցավէպի որոշ պատումներում սա բացատրւում է իբր նրա «վախկոտ» կամ ճողուած լինելով։ Զանց առնելով այս երկու (յոյժ կասկածելի) յատկանիշների ծագման քննութիւնը՝ նկատենք, որ Վերգոյի «Ցռան» մակդիրը կարող է մեկնաբանուել նաեւ բոլորովին այլ կերպ։ Այսպէս՝* Ցռան *մակդիրը կարող էր ծագած լինել* ցիռ *կենդանու անունից։ Ցիռը, ինչպէս յայտնի է,* վայրի էշն *է, որ հին ժամանակներում Հայաստանում եղել է որսի տարածուած կենդանի։ Ցիռերի որսի մասին վկայութիւն կայ է. դարի գիտնական Անանիա Շիրակունու թուաբանական խնդիրներից մէկի մէջ. ընդ որում, այս խնդրում խօսքը ցիռերի երամակի մասին է, որ բաղկացած է եղել 2160 կենդանիներից[12]։ Սա վկայութիւն է առ այն, որ ցիռը է. դարում Հայաստանում շատ տարածուած եւ մեծ երամակներով հանդիպող կենդանի է եղել։*

Սրա հետ մէկտեղ գիտենք, որ ներկայիս Խեցգետին կենդանակերպի մէջ որոշ աստղեր հայկական անուններով կոչուել են «էշ» կամ «էշեր»[13]։ Ի դէպ, նոյնն է նաեւ արդի աստեղային անուանացանկում. Խեցգետին կենդանակերպի գամմա (γ) եւ դելտա (δ) աստղերը կոչւում են “Asellus Borealis” *եւ* “Asellus Australis”, *որ նշանակում են համապատասխանաբար՝ հիւսիսային եւ հարաւային իշուկներ։ Այս երկու աստղերը գտնւում են Մսուր աստղակոյտի (*Praesepe, M 44, NGC 2632*) անմիջական հարեւանութեամբ, եւ պատահական չէ, որ մինչեւ այսօր էլ Սուրբ Ծննդեան տեսարանի տարբեր պատկերումներում Յիսուսի մսուրի կողքին որպէս կանոն առկայ է էշի պատկերը (տե՛ս նկ. 1)[14]։ Այսինքն՝ էշի (կամ էշերի) երկնա-*

---

[12] *Տե՛ս «Անանիայի Շիրակայնւոյ Համարողի մատենագրութիւնք», աշխատ.՝ Ա. Աբրահամեան, Երեւան, 1943, էջ 230–231։*

[13] *Տե՛ս* Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտ. Բ, Երեւան, 1973, էջ 117։ Այստեղ «էշ» բառի բացատրութեան մէջ ունենք. «Երկու աստղեր Խեցգետին համաստեղութեան մէջ»։*

[14] *Մսուր աստղակոյտը տարբեր մշակոյթներում նոյնացուել է հէնց այն մսուրի հետ, որի մէջ դրուել է նորածին Յիսուսը (*W. T. Olcott, Star Lore, New York, 1911, p. 89*)։*

յին կերպարը կանոնականացուած է այն աստիճանի, որ մտած է նաեւ հայկական քրիստոնէական պատկերագրութեան համակարգ։ Այս կապակցութեամբ արժէ նշել նաեւ, որ մանուկ Յիսուսի, մսուրի եւ էշերի այս կանոնականացուած պատկերագրական համակարգը մի այլ զուգահեռ եւս ունի աստղալից երկնքում։ Բանն այն է, որ Յիսուսը իր բազմաթիւ դրսեւորումներով անկասկած արեգակնային կերպար է, եւ բնական է, որ նրա «երկնային ուղին» էլ լինի հէնց Արեգակի երկնային ուղին, որ է՝ խաւարածիրը։ Արդ, երկնային քարտէզի վրայ էլ յստակ տեսնում ենք, որ Մսուր աստղոյթը (արդի ընկալմամբ՝աստղակոյտը) հէնց խաւարածրի վրայ է։ Այսինքն, երկրային մսուրը, որի մէջ սկսւում է Յիսուսի երկրային կեանքը, իր զուգահեռն ունի երկնքում՝ ի դէմս Մսուր աստղակոյտի, որի միջով հէնց անցնում է Արեգակի ուղին։ Աւելին, Փրկչական դարաշրջանի սկզբում (այսինքն, մօտաւորապէս Քրիստոսի ծննդեան ժամանակներում) հէնց Մսուր աստղակոյտին կից է գտնուել ամառային արեւադարձի կէտը, այսինքն՝ Արեգակի բարձրագոյն դիրքը երկնքում։ Եւ շատ կարեւոր է նաեւ այն, որ հէնց Յունուարի 6-ին (այսինքն՝ այն օրը, երբ Հայոց Եկեղեցին տօնում է Յիսուսի ծնունդը) Արեգակը գտնուում է Մսուրից 12 ժամ 19 րոպէ հեռաւորութեան վրայ, որ նշանակում է, թէ այդ օրը կէսգիշերին Մսուրը կը գտնուի իր ամենաբարձր դիրքում։ Ստացւում է, որ Արեւ — Յիսուսի ծննդեան օրը նրա գտնուելու տեղը՝ Մսուրը ամենաբարձր դիրքն ունի երկնակամարում։

Նախքան առաջ անցնելը ուշադրութիւն դարձնենք եւս մի հանգամանքի։ Ներկայումս «էշ» բառը եւ ընդհանրապէս՝ էշ կենդանին հայերէն խօսակցական լեզուում ունեն որոշ բացասական իմաստ։ Սակայն անմիջապէս նկատենք, որ սա որոշակիօրէն նոր ժամանակների իրողութիւն է, եւ հնում վստահաբար պէտք է եղած լինի սրա հակառակ պատկերը։ Ասուածի բազում վկայութիւններից նշենք միայն երկուսը։ Վանի թագաւորութեան մեհենագրութեան համակարգում Իշպուինի արքայի անունը գրուել է հէնց էշի պատկեր ներկայացնող մեհենագրով, որն ունի հէնց «իշ» ընթերցում[15]։ Անկասկած է, որ եթէ այս կենդանին կամ իր անու-

---

*Իսկ էրատոսթենէսը (Ն.Ք. Գ դար) խեցգետին համաստեղութիւնը ներկայացրել է իբրեւ «խեցգետին, էշեր եւ Օրօրոց» (*R. H. Allen, Star-names and their Meanings, New York, 1899, p. 107*)։ Միջնադարեան Եւրոպայում եւս Մսուրն ու կից էշերը համարուել են մանուկ Յիսուսի մսուրը էշի եւ եզան հետ (*R. H. Allen, p. 109*)։*

[15] Ա. Մովսիսեան, *Վանի թագաւորութեան մեհենագրերը, «Հանդէս Ամսօրեայ», 1—12, 1996, սիւն 360 — 403։*

նը ունենային թէկուզ աննշան բացասական իմաստ, ոչ ոք չէր յանդգնի դրա պատկերով գաղափարագիրը օգտագործել ամենազօր արքայի անունը գրելու համար: Աւելացնենք նաեւ, որ «էշ» բառը հայերէն բազմաթիւ դարձուածքներում ունի նաեւ «մեծ», «խոշոր» իմաստ: Այդ իմաստով ունենք, օրինակ, «էշի չափ», «Եվէաայ էշ», «Իշու չափ» արտայայտութիւնները, որ նշանակում են «շատ մեծ[16]»: Նոյնն է ցուցանում նաեւ «էշին չհասնելով փալանը ծեծել» արտայայտութիւնը, որի բուն իմաստն է «գլխաւորին, մեծաւորին վնասել չկարողանալով՝ փոքրաւորին վնասել, պատժել»[17]: Այս նոյն շարքին հարկ է դասել նաեւ «Ով էշ՝ ես փալան» դարձուածքը, որի իմաստն էլ այն է, թէ անկախ մեծաւորից, իշխանաւորից ես միշտ իմ տեղում եմ[18]:

Այսինքն, կարելի է կարծել, որ «էշ» բառը հնում պէտք է ունեցած լինի գերազանցապէս դրական («մեծ») իմաստ: Եւ, ըստ այսմ լիովին հասկանալի է, որ Իշպուինի արքայի անունը գրուել է հէնց էշի գլուխ պատկերող նշանագրով[19]:

Վերգոյի աստեղային կերպարի այսպիսի նոյնացման համար կարեւոր է նաեւ այն, որ նրա «Ցռան» մակդիրը կարելի է մեկնաբանել նաեւ իբր «Ջռան»՝ *կապելով այն էշ (ցիռ) կենդանու բնութագրական ձայնի՝* զռոցի *հետ՝ իբր* «զռացող», *այսինքն՝ «էշին բնորոշ ձայն հանող»:*

Ի դէպ, «ցիռ» եւ «զռալ» բառերի իմաստային եւ հնչական մօտիկութիւնը կարող է հիմք տալ այս բառերը ստուգաբանօրէն իրար կապելու համար: Սակայն ըստ Հր. Աճառեանի՝ «զռալ»-ը բնաձայն բառ է, իսկ «ցիռ»-ի համար էլ ընդունուած ստուգաբանութիւն տրուած չէ: Գ. Ջահուկեանն ընդունում է, որ «զռալ»-ը բնաձայն է, իսկ «ցիռ»-ի համար տալիս է հնդեւրոպական **sker* — ցատկել *արմատը: Այսինքն՝ այսօրուայ լեզուաբանական գիտութիւնն այս բառերի միջեւ կապ չի տեսնում[20]:*

---

[16] Պ. Բեդիրեան, *Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, էջ 470:*

[17] *Տես ն. տ.:*

[18] *Անդ, էջ 468:*

[19] *Բառիս այսպիսի ընկալումը թոյլ է տալիս մտածել նոյնիսկ, որ հնարաւոր է հէնց Իշպուինի անձնանուան ինչպէս նաեւ՝ հայերէն իշխան — «մեծաւոր, գլխաւոր» բառի կապը «էշ» բառի հետ: Ի դէպ, Հր. Աճառեանն էլ իշխել բառի նախնականը դնում է «*էշխել». տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Բ., Երեւան, 1973, էջ 247:*

[20] *Տես* Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտ. Բ., Երեւան, 1973, էջ 110, հտ. Դ., Երեւան, 1979, էջ 455. նաեւ՝* Գ. Ջահուկեան, *Հայերէն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 243, 743:*

Այսպիսով, Վերգոյի մակդիրի թէ՛ իբրեւ «ցիռ», թէ՛ իբրեւ «զռացող» մեկնաբանումները հնարաւորութիւն են տալիս Սասնայ տան հիմնադրի այս որդուն կապելու-նոյնացնելու Խեցգետին *(նախկինում՝ էշ կամ էշեր, կամ աւելի նախնաբար՝* Ցիռ*) կենդանակերպի հետ։ Նկատենք նաեւ, որ Վերգոյի «Ցռան» կամ «Զռան» մակդիրը դրականօրէն (իբրեւ ցիռ կենդանու հետ կապուած) մեկնաբանելու օգտին է նաեւ այն, որ դիցավէպի որոշ պատումների մէջ Վերգօն հանդէս է գալիս յոյժ դրական՝* «Թաղան» *մակդիրով, որ նշանակում է «չքնաղ, գեղեցիկ»* [21]*։*

Ընդհանրապէս, հայկական բանահիւսութեան մէջ առկայ՝ թագաւորի երեք որդիները, ինչպէս յայտնի է, արեգակնային կերպարներ են։ Այդպէս է թէ՛ հայկական հրաշապատում հէքեաթներում, թէ՛ կանոնականացուած այլ պատմութիւններում։ Այս երեք եղբայրները կատարում են արեգակնային հերոսներին բնորոշ գործողութիւններ. հսկում-պահպանում են հայրական տիրոյթները, այգին, անմահական խնձորներով ծառը, խոցում-սպանում են այդ այգին ու ծառը կողոպտելու եկած դեւերին, աղջիկներ են ազատագրում եւ այլն։ Այս երեք եղբայրները, իբրեւ երեք արեգակնային աստուածներ, խորհրդանշում են Արեւի երեք հիմնական դիրքերը՝ ծագող, միջօրէի եւ մայր մտնող։ Ընդ որում, աւագ որդին, ըստ տրամաբանութեան, պիտի լինի մայր մտնող Արեւը, միջնեկը՝ միջօրէի՝ բարձր, կիզող Արեւը, իսկ կրտսեր որդին պիտի լինի նոր ծագող Արեւը։ Ըստ այս տրամաբանութեան՝ Վերգօն, կապուած լինելով ցիռ-էշի հետ, պիտի լինի միջնեկ որդին, ուրեմն եւ՝ միջօրէի բարձր, կիզող Արեւը։ Յիշենք հնում Հայաստանում եղած՝ Արեւին ձի զոհաբերելու աւանդոյթը, նաեւ այն, որ ըստ հին Հայոց պատկերացումների՝ Արեւը երկնքով շարժուել է չորս ձի լծած կառքով։ Մեզ է հասել նաեւ սրա նիւթական վկայութիւնը՝ Սանահինից գտնուած բրոնզէ գօտին, որի վրայ պատկերուած է երեք քառաձի լուծ։ Դրանք ակնյայտօրէն խորհրդանշում են տարուայ 12 ամիսներն ու 3 եղանակները[22] *(տե՛ս նկ. 2)։ Նկատենք նաեւ, որ թէ՛ խորհրդաբանական, թէ՛ կիրառական-գործառութային առումով էշ կենդանին (ուրեմն՝ նախապէս եւ ցիռը)*

---

[21] *Տե՛ս օր.՝ «Արարատ», 1909, թիւ Գ., էջ 1. նաեւ՝ «Սասնայ ծռեր», հտ. Ա., Երեւան, 1936, էջ 1030։*

[22] *Տե՛ս* Բ. Թումանեան, Յ. Մնացականեան, *Բրոնզէ դարի գօտի-օրացոյց, Երեւան, 1965։ Թէ՛ այս գօտու պատկերների վերլուծութիւնը եւ թէ՛ Հայոց հնագոյն օրացոյցների հետազօտութիւնը ցոյց են տալիս, որ հնում Հայաստանում տարեշրջանը բաժանուած է եղել ոչ թէ չորս, այլ երեք մասի։*

ձիու նախորդն է։ Մինչեւ իսկ, ըստ արդի լեզուաբանութեան, հայերէն «էշ» բառը ծագում է «ձի» նշանակող ek´wo *արմատից*[23]։ *Սա եւս յստակ ցուցում է առ այն, որ հին Հայոց պատկերացումներում այս երկու կենդանիները խորհրդաբանօրէն իրարից չեն տարբերուել։ Այսինքն՝ Վերգօն իր «Յռան» (կամ «Զռան») մակդիրով անմիջականօրէն աղերսւում է ցիռ-էշ-ձիու եւ նրա պաշտամունքի հետ, որով եւ՝ Արեւի ու դրա պաշտամունքի հետ։ Այս կապակցութեամբ տեղին է յիշել, որ էշ կենդանու անունը պարսկերէն արտասանւում է* «խար», *որ ուղղակի առընչւում է հայերէն* խար *(խարոյկ, խարան, խարկել, խարշել — բոլորը՝ այրելուն առնչուող իմաստներով) արմատի հետ։ Սա յստակ ցուցում է այն մասին, որ էշ (ցիռ) կենդանին իր կրած խորհուրդով միարժէքօրէն աղերսւում է Արեւի եւ յատկապէս՝ կէսօրուայ այրող, կիզող Արեւի հետ։ Էշի եւ բարձրագոյն դիրքում գտնուող Արեւի առընչութեան մի ցայտուն օրինակ էլ ունենք աւետարանական պատմութեան՝ Յիսուսի՝ Երուսաղէմ մտնելու դրուագում։ Այստեղ Յիսուս Իր քարոզութեան, երկրային գործունէութեան բարձրակէտը, որ է՝ խաչելութեանը նախորդող վերջին մէկ շաբաթը, սկսում է էշի եւ աւանակի (որ է՝ քուռակի) վրայ նստած Երուսաղէմ մտնելով (Մատթ. ԻԱ. 1—11)։*

Այս կապակցութեամբ տեղին է յիշել նաեւ, որ էշը հնում սրբացուած կենդանի է եղել Հայաստանում. իբրեւ էշի (ցիռի) հնագոյն պաշտամունքի հետքեր՝ կարելի է դիտել Հայաստանի պատմական աշխարհագրութեան մէջ առկայ տեղանունները, որոնցում յիշատակւում է էշ (ցիռ) կենդանու անունը։ Այս կարգի անուններից յիշենք, օրինակ, Իշայր (նաեւ Միւս Իշայր) գաւառը Մոկաց աշխարհում, Իշարած լեռը Իջեւանի շրջանում, Էշակ (Իշակ) կղզին Ուրմիայ լճում, Յռի գիւղը եւ քաղաքը Արցախում[24] *են։*

Դիցական եւ երկնային կերպարների համադրումը

Այսպիսով՝ Սանասարը եւ նրա երեք որդիները Կենդանանշանի չորս համաստեղութիւնների անձնաւորված-դիցաբանական կերպարներն են։ Անշուշտ, հնարաւոր է, որ այս զուգադրումներն ու դրանց հիման վրայ

---

[23] *Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Բ., էջ 117։*

[24] *Տե՛ս* Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 2, Երեւան, 1988, էջ 346, 527, հտ. 5, Երեւան, 2001, էջ 164։*

արուած համապատասխանեցում-նոյնացումները թուան ոչ բաւարար հիմնաւորուած։ Ուստի, այս նոյնացումներն առաւել հիմնաւորուած դարձնելու համար փորձենք դիտարկել դրանք միասին՝ իբրեւ մէկ ամբողջական պատկեր։ Այսինքն՝ դիտարկենք Սանասարին եւ նրա երեք որդիներին իբրեւ մէկ ամբողջութիւն մի կողմից եւ այս կերպարների հետ նոյնացուած համաստեղութիւններն իբրեւ մէկ ամբողջութիւն՝ միւս կողմից։

Այս տեսանկիւնից հարցին մօտենալիս անմիջապէս ուշադրութիւն է գրաւում այն, որ ճիշտ այնպէս, ինչպէս Սանասարն ու իր երեք որդիները մէկ ամբողջական ընտանիք *են (ընտանիքի արական մասը), նոյն կերպ եւ Սանասարին (Բաղդասարի հետ միասին), Մհերին, Օհանին ու Վերգոյին զուգադրուած-համապատասխանեցուած չորս համաստեղութիւնները կազմում են* մէկ ամբողջական հատուած *Կենդանաշրջանի մէջ։ Դա* Ցուլ, Երկուտրեակ, Խեցգետին, Առիւծ *հատուածն է (սկիզբը Ցուլն է, վերջը՝ Առիւծը)։ Այսինքն՝ արդէն իսկ կարող ենք ընդունել վերն առաջարկուած զուգադրումներ-համապատասխանեցումները հիմնաւորուած այն առումով, որ այսպիսի համադրումը հանգեցնում է երկու կողմերում էլ* մէկական ամբողջական միաւոր *ստանալուն (մի կողմում՝ մէկ ամբողջական ընտանիք, միւս կողմում՝ Կենդանաշրջանի մէկ ամբողջական ամփոփ հատուած)։ Սակայն ստացուած համադրութիւնն աւելի խոր, աւելի հիմնարար մաս եւս ունի։*

Ինչպէս ժամանակին ցոյց է տրուած եղել, ըստ հայկական հնագոյն պատկերացումների՝ Կենդանաշրջանի Ցուլից Առիւծ *հատուածն իր պարունակած չորս համաստեղութիւններով կազմել է մէկ ամբողջական երկնային կերպար, այն է՝* երկնային վիշապի *մի մեծ կերպար*[25]*։ Ցուլ կենդանակերպը համարուել է այս հսկայ երկնային վիշապի գլուխը, իսկ Առիւծը՝ դրա տուտը (պոչը)։ Այս կերպ ստացւում է, որ Սանասարին եւ նրա ընտանիքին համապատասխանում է ոչ միայն Կենդանաշրջանի մէկ ամբողջական հատուած, այլ նաեւ մէկ ամբողջական կերպար, այն է՝* երկնային վիշապի *կերպարը։*

Կերպարների յաջորդականութեան խնդիրը

Այս դիցական կերպարների եւ համաստեղութիւնների նոյնացման խնդրում առկայ է նաեւ որոշ դժուարութիւն։ Բանն այն է, որ երկնքում

---

[25] *Տե՛ս* Գր. Բրուտեան, *Երկնային վիշապի մասին պատկերացումները հին Հայոց տիեզերաբանական համակարգում, «Էջմիածին», 2009, Գ., էջ 20–36։*

մեզ հետաքրքրող համաստեղութիւնների դասաւորութիւնը լիովին չի համապատասխանում մեզ հետաքրքրող դիցական կերպարների ժամանակային ու ժառանգական հերթականութեանը։ Այսպէս. երկնակամարի վրայ մեզ հետաքրքրող համաստեղութիւնները դասաւորուած են Ցուլ, Երկուորեակներ, Խեցգետին, Առիւծ *հերթականութեամբ։ Իսկ դրանց համապատասխան դիցական կերպարները՝ Օհանը, Սանասարը (Բաղդասարի հետ), Վերգօն եւ Մհերն ունեն բոլորովին այլ ժամանակային-ժառանգական հերթականութիւն։ Ներկայացնենք դա աղիւսակով։*

Աղիւսակ 2.

	Համաստեղութիւնը	Ցուլ	Երկուորեակներ	Խեցգետին (Ցիռ)	Առիւծ
ա.	*Դիցական կերպարն ըստ Կենդանաշրջանի*	*Զէնով Օհան*	*Սանասար եւ Բաղդասար*	*Ցռան Վերգօ*	*Մեծ Մհեր*
բ.	*Դիցական կերպարն ըստ դիցավէպի*	*Սանասար եւ Բաղդասար*	*Ցռան Վերգօ*	*Զէնով Օհան*	*Մեծ Մհեր*

Աղիւսակ 2-ում ներկայացուած են խնդրոյ առարկայ չորս համաստեղութիւնները (վերեւի տողում) եւ Սանասարի ընտանիքի չորս կերպարները (ստորին երկու տողերում)։ Առաջին տողում դիցական կերպարները տրուած են այն հերթականութեամբ, ինչպէս նրանք ներկայացուած են Կենդանաշրջանում, իսկ երկրորդ տողում նոյն կերպարների հերթական դասաւորութիւնն է ըստ դիցավէպի։

Աղիւսակից ակնյայտ երեւում է, որ ա. *եւ* բ. *տողերի տուեալները չեն համապատասխանում իրար։ Առաջին տողում նոյն դիցական կերպարները դասաւորուած են ըստ համաստեղութիւնների հետ կերպարների համապատասխանութեան, եւ այս դասաւորութիւնն էլ տարբեր է դիցավէպում տրուած ժառանգական-ժամանակային յաջորդականութիւնից, որ ներկայացուած է երկրորդ տողում։ Տեսնում ենք, որ դիցավէպում եւ Կենդանաշրջանում իրարից տարբեր՝ մէկական դիրքով շեղուած են Զէնով Օհանի, Երկուորեակների եւ Ցռան Վերգոյի տեղերը։*

Այս անհամաձայնութիւն-հակասութիւնը յաղթահարելու համար նախ եւ առաջ յիշենք, որ «Սասնայ ծռերի» բազմաթիւ պատումներում բոլոր

գործող անձանց ժամանակային ու ժառանգական դասաւորութիւնները տարբեր են։ Կան տարբերակներ, ուր Սասնայ տան հիմնադիր երկուորեակ եղբայրներից ոչ թէ Սանասարն է ժառանգ տուողը, այլ Բաղդասարը։ Կան տարբերակներ, ուր այս եղբայրները ժառանգներ են ունենում, եւ նրանցից էլ սկիզբ են առնում թէ՛ Սասնայ տունը, թէ՛ Մսրայ իշխանաւորները։ Կան տարբերակներ, ուր Սանասարի որդիներից աւագը Մհերն է, իսկ որոշ տարբերակներում նոյն Մհերը Սանասարի որդիներից կրտսերն է։ Այս թուարկումը կարելի է դեռ երկար շարունակել։ Կարեւորն այստեղ այն է, որ ունենք յստակ վկայութիւն, որ Սասնայ տան տոհմածառը (գոնէ ա՛յս հատուածում) մեզ է հասել որոշակիօրէն աղաւաղուած-խեղաթիւրուած վիճակում։ Իսկ սա իր հերթին նշանակում է՝ որեւէ հիմք չունենք վստահ լինելու, թէ այս տոհմածառի՝ մեզ հասած տարբերակներից ո՛րն է նախնականը, ճիշտը։ Նախնականը գտնելու խնդրում էական օժանդակութիւն կարող է լինել հէնց համաստեղութիւնների հետ համեմատութիւնը։ Իրօք, համաստեղութիւնները, որպէս աստղալից երկնքի հետ կապուած իրողութիւններ, շատ աւելի կայուն պիտի լինեն զանազան աղաւաղումների նկատմամբ, քան դիցաբանական պատկերացումների վրայ հիմնուած առընչութիւնները։ Սա նշանակում է, որ հնարաւոր է նոյնիսկ «ճշգրտել» Սասնայ տան հերոսների նախնական ժառանգական-ժամանակային յաջորդականութիւնը՝ հիմք ընդունելով Սասնայ հերոսների եւ նրանց համապատասխան համաստեղութիւնների դասաւորութիւնը երկնքում։ Իբրեւ այդպիսի ճշգրտման առաջին մօտաւորութիւն՝ կարելի է ընդունել Օհան—Սանասար ու Բաղդասար—Վերգօ—Մհեր յաջորդականութիւնը (տե՛ս աղ. 2-ի ա. տողը)։

Սասնայ տան անդամների այսպիսի ժամանակային-ժառանգական դասաւորութիւնն այսօր կարող է անսովոր, օտարոտի թուալ շատերիս, որ դիցավէպը գիտենք միայն ըստ համահաւաք բնագրում ամրագրուած տարբերակի։ Սակայն խնդրին անաչառ մօտենալիս հարկ է ընդունել, որ աստ բերուած տարբերակն ունի ոչ քիչ հիմնաւորումներ։ Դիտարկենք դրանցից մի քանիսը։

Ձէնով Օհանի դիրքը Սասնայ տան մէջ եւ երկնքում

Ըստ աստ առաջարկուած ժամանակային-ժառանգական դասաւորութեան՝ Սասնայ տան առաջին ներկայացուցիչը, այսինքն՝ հիմնադիրը,

պիտի լինի Ձէնով Օհանը։ Առաջին հայեացքից տարօրինակ երեւացող այս դասաւորութիւնը կարելի է հիմնաւորել հետեւեալ կերպ։

ա. Օհանը Սասնայ տան այն եզակի ներկայացուցիչն է (Քեռի Թորոսի հետ միասին), որ ներկայ է դիցավէպի բոլոր ճիւղերում եւ մասնակցում է բոլոր կարեւոր իրադարձութիւններին՝ մինչեւ Փոքր Մհերի փակուելը Ագռաւաքարում (որոշ պատումներում նա մահանում է Մհերի փակուելուց մի փոքր աւելի վաղ)։ Իր «երկարակեցութեամբ» նա մի փոքր զիջում է միայն Քեռի Թորոսին։

բ. Օհանը եւս, ինչպէս Սասնայ տան միւս հսկաները, շատ զօրաւոր է, ունի (երեք) հրաշք ձի(եր), կարողանում է ակնթարթօրէն հասնել իրեն պէտք եղած վայրը, կռուին մասնակցում է արմատախիլ արուած բարդի ծառով, որով շատ «արդիւնաւէտ» աւլում-սրբում է թշնամու զօրքը։ Ի դէպ, այսպիսի «զէնքի» կիրառումը խօսում է այդ կերպարի նախնականութեան մասին, քանզի արմատախիլ արուած ծառը (որ նոյնն է՝ թէ փայտեայ մահակը կամ մահակի նախնականը, միայն առաւել դիցականացուած ձեւով) մարդկային մերկ ձեռքից եւ ձեռքով նետուած քարից յետոյ հնարաւոր ամենապարզունակ զէնքն է եւ շատ աւելի նախնական է, քան Սասնայ տան միւս հերոսների հրաշագործ թուրը, գուրզը, հեռահար նետ-աղեղը եւ այլն։

գ. Ի դէպ, պակաս կարեւոր չէ նաեւ այն, որ Օհանը (ինչպէս եւ Քեռի Թորոսը) նոյնիսկ զրահ ու սաղաւարտ չի կիրառում։ Սա եւս կարելի է դիտարկել իբրեւ այդ կերպարի հնութեան, նախնականութեան վկայութիւն։

դ. Բացի այդ՝ Օհանը նաեւ ունի մի յատկանիշ, որով նա էապէս գերազանցում է Սասնայ տան միւս բոլոր հսկաներին. դա Օհանի հզօր ձայնն է, որով նա կարողանում մի աշխարհից միւս աշխարհ ահազանգ ուղարկել, տեղեակ պահել իր ազգական հսկաներին վերահաս վտանգի կամ փորձանքի մասին, կամ՝ յուշել-թելադրել նրանց անելիքը։

Սրանով Օհանը որոշակիօրէն ամպրոպային աստուծոյ գծեր է ձեռք բերում։

*Իսկ միւս կողմից՝ քաջ յայտնի է, որ բազմաթիւ հին դիցարաններում հէնց ամպրոպային աստուածներն են հանդէս գալիս իբրեւ գլխաւոր աստուած, իբրեւ աստուածների հայր։ Յիշենք այս կապակցութեամբ յունական Զեւսին, լատինական Եովիսին, որ Հայր (*Pater*) մակդիրով դարձել է Եուպիտեր (*Jovis Pater = Jupiter*), նաեւ՝ Հայոց Արամազդին եւն։ Այսինքն՝ իբրեւ ամպրոպային աստուած՝ Օհանը լրիւ «իրաւունք» ունի դիցարանի*

գլխաւոր աստուածը լինելու, որով եւ Սասնայ տան հիմնադիրը, միւս հսկաների հայրը լինելու։ Ի դէպ, Օհանի հայրական գործառոյթը շատ ցայտուն դրսեւորուած է նաեւ Սասունցի Դաւթի ճիւղում։ Այստեղ Օհանը պարզապէս փոխարինում է Դաւիթի մահացած հօրը, եւ տարբեր առիթներով հէնց Դաւիթն ինքը շեշտում է Օհանի՝ իր հօր փոխարէն լինելը, նրան կոչում «հէրահոտ» («խէրախոտ») կամ «հէրագութ» մակդիրով։ Նկատենք, որ ամպրոպային աստծու գլխաւորող դիրքը դիցարանում բնականօրէն բղխում է նրա՝ կայծակների տիրակալ լինելու գործառոյթից։ Ամպրոպը բնականօրէն աղերսւում է կայծակների հետ. բնութեան մէջ կայծակները տեղի են ունենում գերազանցապէս ամպրոպի ժամանակ։ Սրա հետ մէկտեղ նկատենք նաեւ, որ կայծակը, իբրեւ երկնքից վայր իջնող խոցող, ոչնչացնող գործօն, միանշանակ պիտի ընկալուած լինի իբրեւ ամենահզօր աստծու զէնք, որով վերջինս ի զօրու է խոցելու-ոչնչացնելու ամեն էակի՝ լինի մահկանացու, թէ անմահ։ Այսինքն՝ ամպրոպային աստուածը, որպէս ամպրոպի ու կայծակի տիրակալ, ինքնաբերաբար պիտի ընկալուած լինի իբրեւ ամենազօր գլխաւոր աստուած։

Օհանի ամպրոպային աստուած լինելու մասին է վկայում նաեւ այն, որ նրա՛ մօտ են պահւում Սասնայ հերոսների բոլոր հրաշագործ զէնքերը, այդ թուում եւ՝ Թուր Կեծակին։ *Այսինքն՝ Օհանը նաեւ* կայծակնային (եւ մնացեալ) զէնքի պահապանն է, *որով դարձեալ փաստւում է նրա ամպրոպային աստուած լինելը։ Կարելի է այստեղ յաւելել նաեւ, որ Օհանը նաեւ Սասնայ տան գանձերը պահպանողն է. նա՛ է, որ Մըսրրից եկած հարկահաններին ոսկի է չափում-տալիս։*

Ի դէպ՝ այստեղ կարեւոր է նաեւ հետեւեալը. երբ Դաւիթն Օհանից խլում է ոսկի չափելու կոտը եւ ինքն է սկսում ոսկին չափել, փաստօրէն, այդ կերպ Օհանից խլում է նաեւ Սասնայ տան իշխանութեան մի մասը։ Այսպիսով՝ իշխանութեան փոխանցումը Օհանից Դաւթին կատարւում է մաս-մաս։ Վերջնականօրէն Դաւիթն ստանձնում է Սասնայ տան իշխանութիւնը, երբ Օհանից (զօռով) վերցնում է Մհերից մնացած հրաշք զէնքերը եւ ձին՝ Քուռկիկ Ջալալին։

Ահա այս կերպ մենք կարող ենք Զէնով Օհանին դիտարկել իբրեւ ինչոր ժամանակ Սասնայ տան հիմնադրի, գլխաւորի դիրքն ունեցած կերպար։ Զէնով Օհանի նախնական դիրքը՝ իբրեւ գլխաւոր աստուած, կարելի է հիմնաւորել նաեւ նկատի առնելով նրա անունը։ Այսպէս՝ Օհան կամ Յովան, Յովհան անունը (եթէ զանց առնենք աստուածաշնչեան

ստուգաբանութիւնը[26]) սերտօրէն կապուած է հին միջագետքեան Օհաննէս (Օաննէս) աստծու (մշակութային հերոսի) անուանը։ Սա յոյժ ուշագրաւ մի կերպար է (կէս մարդ — կէս ձուկ), որի մասին յայտնի է, որ դուրս է եկել ջրից, նախապէս վայրենի մարդկանց սովորեցրել է երկրագործութիւն, գիր-գրականութիւն, քաղաքներ ու տաճարներ կառուցել են (տե՛ս նկ. 3)[27]։ Այս Օհաննէսի անունը, թէպէտ այսօր ընդունուած ստուգաբանութիւն չունի, այդուհանդերձ, հնարաւոր է համարւում, որ այն ծագել է հին Միջագետքից յայտնի շումերական էնկի (Էա, Հայա) աստծու մի մակդիրից[28]։ Այս կերպ նա նոյնանում է մարդուն արարող շումերական Էա (կամ էնկի, կամ Հայա) աստծու հետ, որը, իբրեւ արարիչ աստուած, բնականաբար, կարող է ընկալուել որպէս դիցարանի գլխաւորը։ Այսինքն՝ Ձէնով Օհանի անունը եւս յուշում է, որ ի դէմս նրա՝ մենք գործ ունենք նախապէս ամենագլխաւոր դերն ունեցող մի կերպարի հետ, որով եւ նախնաբար նա լիովին կարող էր հանդէս եկած լինել իբրեւ Սասնայ տան գլխաւորը՝ սկզբնաւորողը։

Ի յաւելումն վերն ասուածի՝ նկատենք նաեւ, որ ըստ մեզ հասած պատկերագրութեան՝ Օհաննէսի գլխի «ձկնային սաղաւարտի» ձեւն ակնյայտօրէն համընկնում է խոյրի ձեւի հետ (տե՛ս նկ. 4, հմմտ. նկ. 3)։ Իսկ խոյրը, ինչպէս գիտենք, քրիստոնէական ծիսական հանդերձանքի այն տարրն է, որ յատուկ է բացառապէս հոգեւոր կառոյցի գլխաւորին՝ *եպիսկոպոսին կամ եպիսկոպոսապետին։ Աւելին. նոյն եպիսկոպոսական հանդերձի մաս է նաեւ արտախոյրը կամ արտախուրակը, որ բաղկացած է խոյրի ետնամասից դէպի վար իջնող միջին երկարութեան (մօտ 30—50 սմ) երկու ելուստից։ Ժամանակակից հանդերձաւորման մէջ այս ելուստները ամրացուած են ոչ թէ ուղղակիօրէն խոյրին, այլ հանդերձը կրող անձի պարանոցը շրջապատող վակասին (նկ. 5)։ Նոյն արտախուրակի մի տարբերակը տեսնում ենք Հայոց արքայ Տիգրան Մեծի եւ նրա յաջորդների պատկերների վրայ՝ այն տարբերութեամբ միայն, որ այս պարագայում արտախուրակները սկիզբ են առնում ոչ թէ վակասից (օձիքից), այլ անմիջապէս թագից (նկ. 6)։ Այսինքն՝ արտախուրակը, որ ներկայիս յատուկ է միայն հոգեւոր իշխանութեան գլխաւորի ծիսական հանդերձին, նախապէս յատուկ է եղել ընդհանրապէս իշխանութեան*

---

[26] *Տե՛ս* Հր. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ., Երեւան, 1946, էջ 537։*

[27] *Տե՛ս* Mehmet-Ali Ataç, The mythology of kingship in Neo-Assyrian art (1. publ. ed.), Cambridge University Press, 2010, *էջ 150։*

[28] *Տե՛ս* «Мифы народов мира», «Советская Энциклопедия», т. 2, *էջ 234։*

Նկ. 1

Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

գլխաւորի ծիսական հագուստին[29]։ Թէպէտ այսօր արտախուրակը միարժէք ընդունուած խորհրդաբանական բացատրութիւն չունի, սակայն Օհաննէսի ձկնային հանդերձի վերնամասի եւ խոյրի ընդհանրութիւնը հիմք են տալիս արտախուրակն էլ բացատրելու իբրեւ նոյն ձկնային հանդերձի ստորին մասի ձկնային երկճիւղ պոչի խորհրդանիշ, վերապրուկ։ Ի դէպ, այս կերպ հասկանալի են դառնում նաեւ Հայոց Արտաշիսեան արքաների թագերի (եւ ընդհանրապէս այդ դարաշրջանի հայկական արքայական թագերի) յետնամասից վար իջնող երկճիւղ յաւելուածները, որ առկայ են այդ ժամանակների դրամագիտական նիւթով մեզ հասած բազմաթիւ պատկերների վրայ։ Դրանք պէտք է լինեն վերապրուկ-մնացորդը Օհաննէս—էա—էնկի—Հայա աստծու ձկնային հանդերձի ստորին մասում առկայ՝ ձկան երկճիւղ պոչի։

Այսպիով՝ ստանում ենք, որ Օհանի նախատիպը հանդիսացող կերպարի (Օհաննէսի) կանոնական հանդերձաւորման գլխի մասը պահպանուել է քրիստոնէութեան մէջ՝ իբրեւ հոգեւոր կառոյցի գլխաւորին յատուկ գլխանոց՝ խոյր, իսկ այդ նոյն՝ ձկնային հանդերձի ստորին մասը՝ ձկան երկճիւղ պոչի նմանութեամբ, պահպանուել է իբրեւ միշտ խոյրի հետ հանդէս եկող՝ վար իջնող զոյգ ելուստներ՝ արտախուրակներ։

Արժէ այս ամենին յաւելել նաեւ այն, որ Զէնով Օհանի այս (Սասնայ տան գլխաւորի) դիրքը հիմնաւորւում է նաեւ նրա եւ Սանասար—Բաղդասար երկուորեակների առընչութեամբ։ Այսպէս, ըստ դիցավէպի, այս երկուորեակների հայրը Ջուրն է. նրանց մայր Ծովինարը յղիացել էր ծովի մէջ բղխած քաղցրահամ ջրի աղբիւրից իր խմած մէկ ու կէս բուռ ջրից։ Իսկ ինչպէս վերը տեսանք, Օհանն իր անունով կապւում է Օհաննէս կէս ձուկ—կէս մարդու դիցական կերպարին, որը հէնց գետի (քաղցրահամ) ջրից է դուրս գալիս։ Այսինքն՝ այս Օհաննէսն իր ծագումով եւ բնոյթով նոյնանում է ջրածին երկուորեակների հօր հետ։ Ըստ այսմ եւս՝ Զէնով Օհանը լիովին համապատասխանում է Սասնայ տան հօր, հիմնադրի կերպարին։

Զէնով Օհանի հնարաւոր դիրքը աստ առաջարկուած նոր (նախնական) դասաւորութեան մէջ հիմնաւորելուց յետոյ դիտարկենք նաեւ Երկուորեակների՝ Սանասարի ու Բաղդասարի դիրքը։

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

[29] Այս առիթով տեղին է յիշել, որ հնագոյն պետական կառոյցներում աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւնները մէկտեղուած են եղել, եւ միեւնոյն անձը կատարել է թէ՛ հոգեւոր, թէ՛ աշխարհիկ իշխանութեան գլխաւորի գործառոյթները։